ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2012թ. թիվ 31-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ
ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՄԲԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի “բ” ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2009թ. փետրվարի 25-ի թիվ 49-Ա որոշման 2-րդ կետի 2) ենթակետի «բ» պարբերության պահանջների, Մարզային Զարգացման Ծրագրի (ՄԶԾ) տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ) մոնիտորինգի և գնահատման համակարգի արդյունավետ աշխատանքն ապահովելու նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Լոռու մարզպետարանում ստեղծել մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման (ՄՄԳ) խումբ՝ համաձայն հավելվածի:

2. ՄՄԳ խմբի անդամ – Ոլորտային աշխատանքային խմբի նախագահներին՝

ՄՄԳ խմբի համակարգողին ներկայացնել զարգացման ծրագրի տարեկան աշխատանքային պլանով համապատասխան ոլորտում նախատեսված իրականացված և իրականացվող աշխատանքների առաջընթացի գնահատման արդյունքները (մոնիտորինգի ոլորտային հաշվետվությունները՝ կիսամյակային և տարեկան կտրվածքներով), բացահայտված թերություններն ու խոչընդոտները և նրանց վերացման նպատակով առաջարկվող լուծումները, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ և տվյալներ:

3. Մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի համակարգող Ս.Հովհաննիսյանին՝

Ապահովել զարգացման ծրագրի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված իրականացվող աշխատանքների մոնիտորինգի հաշվետվությունների (կիսամյակային և տարեկան կտրվածքներով) մշակման աշխատանքները, քննարկել այն մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի ղեկավար մարզպետի տեղակալի մոտ և ներկայացնել մարզպետի հաստատմանը:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2009թ. մարտի 4-ի “Մոնիտորինգի և գնահատման խմբի մասին” թիվ 56-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. փետրվարի 27
ք.Վանաձոր